Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԿՈԴ
050.0095 Ա. 28.04.15

28 ապրիլի 2015 թվականի թիվ 95 Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 31-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ **Արթուր Ջավադյան**

2015 թ. ապրիլի 29
Երևան

ՀՀ կենտրոնական բանկի եզրակացությունը
«ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

2014 թվականին շարունակվել է տնտեսական ակտիվության ցածր տեմպերի պահպանումը, որի պարագայում տնտեսական աճը կազմել է 3.4 տոկոս, նախորդ տարվա 3.5 տոկոսի դիմաց: ՀՀ մակրոմիջավայրի հիմնական զարգացումները, ընդհանուր առմամբ, պայմանավորված էին հատկապես տարվա երկրորդ կեսից արտաքին պահանջարկի տեմպերի դանդաղմամբ, Ռուսաստանից ներհոսող դրամական փոխանցումների կրճատմամբ, ՀՀ համախառն ներդրումների նվազմամբ, ինչպես նաև սպառման ծավալների իրական աճի տեմպի զգալի նվազմամբ (աճը կազմել է 0.2 տոկոս նախորդ տարվա 2.8 տոկոսի դիմաց): Սակայն պետք է նշել, որ ՀՀ տնտեսության աճի դանդաղումը էականորեն մեղմվել է տարվա ընթացքում իրականացված ընդլայնողական դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների շնորհիվ:

2014 թվականի տնտեսական ակտիվության ձևավորմանը հիմնականում նպաստել են ծառայությունների և գյուղատնտեսության ճյուղերում արձանագրված իրական աճերը՝ համապատասխանաբար 5.4 և 7.6 տոկոս, թեպետ տարվա չորրորդ եռամսյակում նկատվել է առևտրի ծավալների էական նվազում: Անկում է արձանագրվել շինարարության ոլորտում՝ նպաստումը -0.4 տոկոսային կետ, իսկ արդյունաբերության ճյուղի իրական աճը կազմել է 2.7 տոկոս:

Շարունակվել է ՀՀ պետական բյուջեի պակասուրդի կրճատման և միջին ժամկետ հատվածում պարտքի կայունության ապահովմանն ուղղված քաղաքականությունը: 2014 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 2 տոկոսը նախորդ տարվա 1.7 տոկոսի և տարվա համար կանխատեսված 2.3[1] տոկոսի դիմաց: Հարկ է նշել, որ պետական բյուջեի պակասուրդը թեև ապահովել է պարտքի կայունության պայմանը, սակայն ՀՆԱ

[1] ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին օրենքի ուղերձում կանխատեսված ցուցանիշը:

կանխատեսվածից ցածր մակարդակի ձևավորման և դրամի արժեզրկման հետևանքով պարտք/ՀՆԱ ցուցանիշն աճել է և կազմել 46.6 տոկոս նախորդ տարվա 43.6 տոկոսի դիմաց

2014 թվականին իրականացրած հարկաբյուջետային քաղաքականությունը, նախորդ տարվա համեմատ, համախառն պահանջարկի վրա ունեցել է ընդլայնող ազդեցություն՝ գնահատված ազդակը կազմել է 1.1 տոկոս ընդլայնող: Ընդ որում, այն ամբողջությամբ պայմանավորված է եղել ծախսերի ընդլայնող ազդակի ձևավորմամբ: Եկամուտների գծով ձևավորվել է չեզոք ազդակ:

2014 թվականին ձևավորված գնաճային միջավայրը բնութագրվում էր տարվա առաջին երեք եռամսյակների ընթացքում ձևավորված գնաճի աստիճանական նվազմամբ, որի պարագայում ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է դեռևս 2013 թվականի նոյեմբեր-դեկտեմբերից իրականացվող վերաֆինանսավորման տոկոսադրույքի իջեցման քաղաքականությունը: 12-ամսյա գնաճը սեպտեմբերի վերջին կազմել է 1.5 տոկոս՝ գտնվելով նպատակային ցուցանիշի տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանից ներքև: Հարկ է նշել, որ 2014 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում 12-ամսյա գնաճի՝ սպասվածից ավելի նվազմանը նպաստել են առավելապես ներդրումների ցածր մակարդակի և մասնավոր սպառման աճի տեմպերի դանդաղման պարագայում համախառն պահանջարկի ցածր տեմպերի պահպանումը և պարենային որոշ ապրանքների գների զգալի նվազումը: Այս պայմաններում, ՀՀ ԿԲ-ն շարունակել է աստիճանաբար թուլացնել դրամավարկային պայմանները: Դեռևս 2013 թվականի նոյեմբերին վերաֆինանսավորման տոկոսադրույքը իջեցվել էր 0.5 տոկոսային կետով, դեկտեմբերին և 2014 թվականին ևս 4 անգամ 0.25 տոկոսային կետով՝ ընդհանուր առմամբ 1.75 տոկոսային կետով՝ հոկտեմբերի վերջին այն սահմանելով 6.75 տոկոս: Դրան զուգահեռ դրամավարկային պայմանների թուլացում է տեղի ունեցել. 2014 թվականի փետրվարից դրամով պահուստավորված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման չափը 4-ից իջեցվել է 2 տոկոսի: Տարեվերջին գնաճային զարգացումները կտրուկ փոխվել են. արտարժութային հոսքերի կտրուկ նվազման սպասումների և ռուսական ռուբլու արժեզրկման ազդեցությամբ պայմանավորված դրամի արժեզրկման պայմաններում գնաճային միջավայրը ընդլայնվել է, ինչի արդյունքում 12-ամսյա գնաճը գերազանցել է սպասելիքները՝ դեկտեմբերի վերջին կազմելով 4.6 տոկոս: ՀՀ կենտրոնական բանկը ստեղծված իրավիճակին արձագանքել է կտրուկ

գործողություններով. մասնավորապես՝ նոյեմբերի վերջից բարձրացվել է լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը 8.25-ից 21 տոկոսի, այնուհետև դեկտեմբերի կեսից բարձրացվել է արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման նորման 12-ից 24 տոկոսի:

Տնտեսական աճի կանխատեսվածից ցածր մակարդակի ձևավորումը անդրադարձել է նաև պետական բյուջեի եկամուտների հավաքագրման վրա: ՀՀ պետական բյուջեի եկամուտները 3.7 տոկոսով զիջել են ՀՀ պետական բյուջեի ճշտված ծրագրով նախատեսված ցուցանիշը: Սակայն ՀՆԱ նկատմամբ հարկային եկամուտների առաջանցիկ աճի ձևավորման պայմաններում հավաքագրված հարկերը 0.27 տոկոսային կետով գերազանցել են տարվա համար կանխատեսված ցուցանիշը և կազմել են ՀՆԱ 23.5 տոկոսը: Վերջինս 0.1 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը: Հարկային եկամուտների և պետական տուրքերի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 6.9 տոկոս կամ 73.4 մլրդ դրամ, պայմանավորված հիմնականում ավելացված արժեքի հարկի, եկամտային հարկի և այլ հարկային եկամուտների աճերով: Հարկ է նշել, որ հարկային եկամուտների աճի ապահովմանը նպաստել է նաև ստվերային շրջանառության կրճատմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների և վարչարարության միջոցառումների շարունակական իրականացումը:

2014 թվականի ՀՀ պետական ծախսերի կատարման գործընթացը ի տարբերություն նախորդ մի քանի տարիների, աչքի է ընկել ծախսերի ծրագրված մակարդակի կատարման համեմատաբար ավելի բարձր ցուցանիշով: Նախորդ տարվա համեմատ ՀՀ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 8.1 տոկոսով, որն արձանագրվել է առավելապես ընթացիկ ծախսերի աճի հաշվին, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով աճը կազմել է 5.9 տոկոս: Պետական ծախսերի աճը հանգեցրել է նախորդ տարվա նկատմամբ ՀՆԱ-ում ծախսերի հարաբերակցության 0.6 տոկոսային կետ աճի և կազմել է ՀՆԱ-ի 27.3 տոկոսը: Ընդ որում, ընթացիկ ծախսերի գծով գրանցվել է անվանական աճ 8.5 տոկոսի չափով, որի պարագայում ընթացիկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը աճել է 0.5 տոկոսային կետով և կազմել 24.3 տոկոս, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով

ծախսերը 2014 թվականին կազմել են ՀՆԱ-ի 3.0 տոկոսը՝ պահպանելով նախորդ տարվա նույն ցուցանիշը: Արդյունքում, պետական բյուջեի ծախսերը կազմել են ծրագրվածի 95.4 տոկոսը, որտեղ ծրագրվածի նկատմամբ ավելի բարձր մակարդակ է արձանագրվել ընթացիկ ծախսերի՝ հատկապես սոցիալական ուղղվածության՝ մասնավորապես կենսաթոշակների, սոցիալական նպաստների և պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի գծով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են ծրագրվածի 82.1 տոկոսը, որը պայմանավորված է հիմնականում արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարվող ծախսերի ցածր կատարողականով:

ՀՀ բյուջեի պակասուրդը կազմել է 90.3 մլրդ դրամ, կամ ծրագրվածի 85.4 տոկոսը, որի պարագայում պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 2.0 տոկոս՝ կանխատեսված 2.3 տոկոսի և 2013 թվականի փաստացի 1.7 տոկոսի դիմաց: Պակասուրդի շեղումը կանխատեսվածից արձանագրվել է արտաքին աջակցությամբ ստացվող վարկային միջոցների պակաս ստանալու հանգամանքով: Տարվա արդյունքում պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում էապես փոխվել է հարաբերակցությունը՝ ի օգուտ ներքին աղբյուրների գերակշռության: Այսպես, տարվա արդյունքում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են 70.0 մլրդ դրամ, կամ պակասուրդի 78 տոկոսը:

Հարկ է նշել, որ ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից ստացվող զուտ մուտքերի հաշվին պակասուրդի ֆինանսավորման ծրագիրը ամբողջությամբ կատարվել է և փաստացին կազմել է 16.6 մլրդ դրամ՝ ճշգրտված ծրագրին համապատասխան: Վերջինս ուղեկցվել է (շրջանառության մեջ գտնվող) պետական (գանձապետական) պարտատոմսերի եկամտաբերության 0.5 տոկոսային կետ նվազմամբ՝ տարվա արդյունքում կազմելով 13.5 տոկոս: Ընդ որում, շրջանառության մեջ գտնվող ՀՀ ներքին պարտքի ժամկետայնությունը երկարել է՝ 2003 օր նախորդ տարվա 1901 օրվա դիմաց: Հարկ է նշել, որ տոկոսադրույքների նվազումը ձևավորվել է պետական պարտատոմսերի ժամկետայնության երկարացման հաշվին:

Ամփոփելով նշենք, որ 2014 թվականին ՀՀ կառավարության կողմից իրականացրած հարկաբյուջետային քաղաքականությունը, առաջնորդվելով ՀՀ կառավարության միջին ժամկետ ռազմավարության ծրագրով նախատեսված պարտքի արդյունավետ կառավարման քաղաքականության շարունակականության պահպանման և ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նախատեսված սկզբունքներով, իրական նախադրյալներ կստեղծի մակրոտնտեսական կայունության պահպանման համար և կնպաստի միջին ժամկետում երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը: